ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/88

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ
Մասնակից՝ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20» ծածկագրով մեկ անձի միջոցով գնման ընթացակարգ, չափման միջոցների ստուգաչափում (հետևելիության շղթայի ապահովմամբ) անցկացնելու համար» ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոառումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4636-2020 գրությամբ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 25.03.2020թ.-ի թիվ Ե/40/484-20 գրության հիման վրա, 26.03.2020թ.-ին «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 26.03.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 27.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/88 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

03.04.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին և 27.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.04.2020թ.-ին:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 24.03.2020թ.-ի թիվ Ե/40/484-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի չափման միջոցների սպուգաչափում և վկայագրում (հետևելիության շղթայի ապահովմամբ) ծառայություններ» անցկացնելու նպատակով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կազմակերպել է «ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20» ծածկագրով գնում մեկ անձից ընթացակարգ: Գնման ընթացակարգի մասնակցելու նպատակով «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ 6619020 (վեց միլիոն վեց հարյուր տասնինը հազար քսան) ՀՀ դրամ և ճանաչվել ընտրված մասնակից:

ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն ընտրված մասնակցին ս/թ մարտի 2-ին «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է պայմանագիր կնքելու

առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն ընտրված մասնակիցը՝ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագիրը ստորագրելուց և առաջարկել է պայմանագիր կնքել 7123020 (յոթ միլիոն հարյուր քսաներեք հազար քսան) ՀՀ դրամով:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետի, այն է՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, Ձեզ ենք ներկայացնում վերը նշված փաստաթղթերի պատճենները:»:

3. <u>«Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4636-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 03.04.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/88 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնում է, որ պատվիրատու հանդիսացող «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գործողություններն իրավաչափ չեն և չկան բավարար հիմնավորումներ մեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներքոնշյալ պատճառաբանությամբ.

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մասնակցել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին և ներկայացրել է գնային առաջարկ՝ դրանում չներառելով «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով գործուղման համար նախատեսված ծախսերը, որի գինը սահմանվում է ՀՀ

կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ (կցվում է): Ինչի հետևանքով պայմանագրի նախագիծը ստանալուց հետո Ընկերությունը հայտնել է այդ մասին Պատվիրատուին (գրությունը կցվում է) և ներկայացրել պայմանագրի ստորագրված տարբերակը՝ դրանում ներառելով նաև գործուղման ծախսերը:

Այնուամենայնիվ Պատվիրատուն չի դիտարկել Ընկերության կողմից պայմանագրի ներկայացման փաստը և անտեսելով ՀՀ օրենսդրության մի շարք դրույթներ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով: Պատվիրատուի այդ մոտեցումը գտնում ենք, որ չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը, որը սահմանում է վերը նշված ցուցակում ներառելու դեպքերը, սահմանում է բացառություն Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի մասով, մասնավորապես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է.

«1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք.....

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է.

«եթե գնումն իրականացվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա մասնակիցը՝

ա. հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ չի ներկայացնում,

բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ:»:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ օրենսդիրը չի սահմանում որևէ պատասխանատվության միջոց մասնակցի համար, եթե գնումն իրականացում Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, մինչդեռ տփալ դեպքում Պատվիրատուի կողմից տփալ գնման ընթացակարգն ընտրվել է հենց այդ հիմնավորամամբ:

2. Ցանկանում ենք նաև անդրադառնալ Պատվիրատուի կողմից կիրառված ընթացակարգի իրավական մասին, և այսպես.

Պատվիրատուի կողմից 2020 թվականի փետրվարի 19-ին Ընկերության էլ. փոստին ուղարկվել է ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր (կցվում է), որի հայտարարության առաջին պարբերության մեջ նշված է, որ իրականացվում է մեկ անձից գնում էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով չնայած այն բանի, որ Armeps համակարգի միջոցով Ընկերությունը որևէ հրավեր չի ստացել:

Պատվիրատուի կողմից ներկայացված հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2-րդ ենթակետով սահմանված է.

«4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 4-րդ օրվա ժամը 13:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:»: Մինչդեռ Ընկերության կողմից հայտը ներկայացվել է թղթային տարբերակով՝ սահմանված ժամկետից ուշ (կցվում է):

Պատվիրատուի կողմից ներկայացված հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանված է.

«8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:» Տվյալ պարագայում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ենթակա էր մերժման, քանի որ դրանում ընթացակարգի ծածկագիրը սխալ էր նշված, ուստի Ընկերությունը չէ կարող ճանաչվել ընտրված մասնակից և հետևաբար նրա մոտ չէ կարող առաջանալ պայմանագիր կնքելու պարտավորություն:

Պատվիրատուի կողմից ներկայացված հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.4-րդ ենթկետով սահմանված է.

«9.4. Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:»:

Ընկերությանը համակարգի միջոցով որևէ ծանուցում չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընկերությունը.

1) Նման պայմաններում չէր կարող ընտրված մասնակից ճանաչվել.

2) Ընկերության մոտ տվյալ պայմաններում չէր կարող ծագել պայմանագիր կնքելու պարտավորություն՝ հետևաբար Ընկերությունը չի խախտել ընթացակարգի շրջանակներում ստանձնված որևէ պարտավորություն: ՈՒստի, խնդրում ենք մերժել «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2020/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չափման միջոցների ստուգաչափում և վկայագրում (հետևելիության շղթայի ապահովմամբ) ծառայությունների ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, հայտարարել է «ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն, ներկայացնելով 6 619 020 (վեց միլիոն վեց հարյուր տասնինը հազար քսան) ՀՀ դրամի գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ գնումը կատարվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընթացակարգի մասնակից՝ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն ներկայացրել էր ֆինանսական հատկացումից ցածր գնային առաջարկ, ոստի վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից և

առաջարկվել է նրա հետ կնքել գնման պայմանագիր 6619020 (վեց միլիոն վեց հարյուր տասնինը հազար քսան) ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ՝ 1103170 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 02.03.2020թ.-ին ashot.ghazaryan@anpp.am էլ. փոստի հասցեից Մասնակցի info@metrology.am էլ. փոստի հասցեին ուղարկված ծանուցման համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, ներկայացվում է պայմանագրի նախագիծը և առաջարկվում է այն կնքել երկու բնօրինակից և նույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ:

Միաժամանակ հայտնել են, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սահմանված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը՝ ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն 12.03.2020թ.-ի թիվ 9ԱՀ-180 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է հետևյալը.

««Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 2020թ. փետրվարի 24-ին թիվ ՉԱԻ-102 գրությամբ ներկայացվել է <ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20 ծածկագրով ««ՀԱԷԿ» ՓԲԸ չափման միջոցների ստուգաչափում և վկայագրում (հետևելիության շղթայի ապահովմամբ) անցկացնելու համար» ծառայության մատուցման մեկ անձի հրավերով սահմանված գնային առաջարկը՝ 6619020 ՀՀ դրամ, որում մեր կողմից չի ներառվել «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով գործուղման համար նախատեսված ծախսերը և ընդհանուր պայմանագրի գումարը ներառյալ գործուղման ծախսերը պետք է կազմեր՝ 7123020 ՀՀ դրամ:

2020թ. մարտի 2-ին «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որով ծառայությունների մատուցման պայմանագրի գինը սահմանված է 6619020 ՀՀ դրամ:

Հայտնում եմ, որ «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն չի կարող պայմանագիրը իրականացնել վերը նշված գումարով, քանի որ հիմք ընդունելով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանի դրույթները՝ 2020թ. հունվարի 21-ին «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ի և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել՝ են թվով 6 պլան-գրաֆիկներ՝ չափման միջոցների ստուգաչափման ծառայությունների համար սահմանված գներով, իսկ

աշխատակիցների գործուղման ծախսերը սահմանվում է ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ, ուստի պայմանագրի գինը չի կարող սահմանվել 6619020 ՀՀ դրամ, քանի որ կխախտվեն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի թիվ 132-Ն հրամանի և ՀՀ կառավարության թիվ 2335-Ն որոշման դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ կից ներկայացնում եմ «ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20 ծածկագրով ընթացակարգի փոփոխված գնային առաջարկը և պայմանագրի բնօրինակները՝ 7 123 020 ՀՀ դրամ պայմանագրային գնով»:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 25.03.2020թ.-ին՝ թիվ Ե/40/484-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4636-2020 գրությամբ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ

մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չափման միջոցների ստուգաչափում և վկայագրում (հետևելիության շղթայի ապահովմամբ) ծառայությունների ձեռքբերման նպատակով «հայտարարված «ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն ներկայացնելով 6619020 (վեց միլիոն վեց հարյուր տասնինը հազար քսան) ՀՀ դրամի գնային առաջարկ Հանձնաժողովի 24.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է կնքել գնման պայմանագիր 6619020 (վեց միլիոն վեց հարյուր տասնինը հազար քսան) ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ՝ 1103170 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 02.03.2020թ.-ին ashot.ghazaryan@anpp.am էլ. փոստի հասցեից Մասնակցի info@metrology.am էլ. փոստի հասցեին ուղարկված ծանուցման համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, ներկայացվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել է այն կնքել երկու բնօրինակից և նույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ:

Միաժամանակ հայտնել են, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սահմանված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը՝ ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն 12.03.2020թ.-ի թիվ 9ԱՀ-180 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ վերջինիս կողմից չի ներառվել «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով գործուղման համար նախատեսված ծախսերը և կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-3/20 ծածկագրով ընթացակարգի փոփոխված գնային առաջարկը և պայմանագրի բնօրինակները՝ 7 123 020 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 12.03.2020թ.-ին՝ հիմք ընդունելով «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ն 12.03.2020թ.-ի թիվ 9ԱՀ-180 գրությունը, սակայն Պատվիրատուի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 25.03.2020թ.-ին՝ թիվ Ե/40/484-20 գրությամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն

իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4636-2020 գրությամբ «Չափագիտության Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/88 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**